ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 օգոստոսի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

119
(2599)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 77



Վարչապետ ընտրվելու 100 օրվա կապակցությամբ Նիկոլ Փաշինյանը հանրահավաք էր հրավիրել Հանրապետության հրապարակում եւ խոստանում էր՝ բոլոր հարցերը կլուծվեն հենց հրապարակում:

«Ղարաբաղի հարցի լուծողը ժողովուրդն է, եւ ես ուզում եմ ասել հետեւյալը. եթե բանակցային գործընթացի արդյունքում կլինի կարգավորման մի տարբերակ, որին ինքս կհավատամ եւ կհամարեմ, որ դա լավ տարբերակ է, որեւէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որեւէ թուղթ կստորագրեմ կամ որեւէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ եւ կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կներկայացնեմ ձեզ, եւ դուք կորոշեք՝ մենք գնում ենք այդ տարբերակով կարգավորման, թե չենք գնում: Կորոշեք, որ գնում ենք՝ ուրեմն կգնանք, կորոշեք, որ չենք գնում, ուրեմն չենք գնա»:

Սակայն նրա հայտարարությունից չորս տարի հետո բազմաթիվ հարցեր են լուծվել միանձնյա՝ առանց քաղաքացիների իմացության, այդ թվում՝ Ղարաբաղի հարցը: Եւ նույն Փաշինյանն ասում էր՝ ինչ պետք է, էն էլ բանակցում ենք:

Ստացվում է՝ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Նիկոլ Փաշինյանի իշխանությունների կողմից հերթական հրահանգն է իջեցվել ուժային կառույցներին: «Ժողովուրդ» օրաթերթը իր աղբյուրներից տեղեկացավ, որ ուժայիններից պահանջվել է կոմպրոմատներ գտնել Լեհաստանում ՀՀ նախկին դեսպան, Վայոց ձորի նախկին մարզպետ Էդգար Ղազարյանի դեմ: Ինչպես հայտնի է, վերջինս նոր պայքար է սկսել՝ ընդդեմ Նիկոլ Փաշինյանի, եւ պահանջում է նրա հրաժարականը: Եվ, ահա, տեւական ժամանակ է՝ ուժային կառույցները փորփրում են Ղազարյանի՝ մարզպետ, դեսպան, ՍԴ աշխատակազմի ղեկավար եղած ժամանակահատվածը, սակայն որեւէ բան չեն գտել նրա դեմ: Իհարկե, ուսումնասիրությունները դեռ շարունակվում են, եւ ուժայինները որոշել են չհանձնվել, ամեն դեպքում ինչ որ բան գտնել Էդգար Ղազարյանի դեմ՝ կատարելով վերադասի հրահանգները: Իսկ մինչ այդ արդեն սկսվել է կեղտոտ արշավը Ղազարյանի դեմ. սոցիալական տիրույթում փորձում են սեւացնել նրան: Անգամ այդ խաղերի մեջ է մտել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը: Վերջինս լրատվականներից մեկի հետ զրույցում նշել է. «Էդգար Ղազարյանը ո՞վ է, որ Նիկոլ Փաշինյանին հրավիրել է հանդիպման, ի՞նչ է իրենից ներկայացնում, կներեք, այդ ոչնչությունը, նա հասարակ սրիկա է, թալանչի, մարզպետ եղած ժամանակ թալանածն էլ Կոմիտասում վեր է ածել անշարժ գույքի»: Թե ինչ փաստեր ունի Աղազարյանը նման մեղադրանքներ ներկայացնելու համար, անհասկանալի է, բայց փաստ է նաեւ, որ կեղտոտ արշավ է սկսվել նաեւ Ղազարյանի ընտանիքի դեմ: Մի խոսքով, Նիկոլ Փաշինյանի ձեռագիրը չի փոխվում:



ՀՀ զինված ուժերում պարտադիր զինծառայությունից խուսափելու համար 24 մլն դրամ գլխագին վճարելու հնարավորության մասին օրենքի նախագիծը փոթորկել է հայ հասարակությանը: Ստացվում է՝ փող ունեցողները, հարուստները կփրկեն իրենց երեխաներին, աղքատների զավակները՝ մսաղացի բերան կգնան: Այս ֆոնին հետաքրքիր է Հայաստանի ամենահարուստ ընտանիքներից մեկի պատմությունը: Նիկոլ Փաշինյանի իշխանության հիմնական ֆինանսավորողները՝ Վահե, Վիգեն Բադալյանները, որ ՀՀ-ում հայտնի բուքմեյքերական «Վիվառռ Բեթինգ» ՍՊԸ-ի սեփականատերերն են, 2016-ից ՀՀ քաղաքացի չեն կամ միայն ՀՀ քաղաքացի չեն: Նրանք շուրջ 2 մլն եվրոյի ներդրում են կատարել հրաշագեղ Մալթայում եւ դարձել Մալթայի քաղաքացի: Ավելին, գործարար եղբայրների հետ քաղաքացիություն է ստացել նաեւ նրանց ընտանիքի 10-ը անդամ: Իհարկե, Բադալյանները մի առիթով «Հետք»-ին ասել են, որ Մալթայի քաղաքացի են դարձել, որպեսզի վիզայի խնդիր չունենան եւ 168 երկիր կարողանան ազատ մուտք գործել, բայց հասկանալի է, որ հիմնական խնդիրը մեծ ընտանիքի տղաներին բանակից ազատելն է: Ամբողջ հանրապետությանը սադրանքներով խաղամոլություն թելադրող, մեր աղքատիկ երկրում վիթխարի գումարներ աշխատող «Վիվառռյի» սեփականատերերը, փաստորեն, նաեւ օտարերկրացի են: Տեղեկանալու համար, թե վորոնշյալ ընտանիքի քանի անդամ է ժամկետային զինվորական ծառայություն անցել, ու քանիսն են նախազորակոչային տարիքում, հետեւաբար՝ նաեւ հաշվառված ՊՆ-ի կողմից, «Ժողովուրդ» օրաթերթը Պաշտպանության նախարարություն հարցում է ուղարկել, ինչի պատասխանը ստանալուն պես կներկայացնենք:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ փաստաբան Տիգրան Մուրադյանը դիմում է ներկայացրել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանին: Իր դիմումի մեջ նա, մասնավորապես, նշել է. «Տեսչական մարմնի իրավասու պաշտոնյաները, հասկանալով, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնը գտնվում է բարձր ռիսկայնության խմբում եւ բացահայտված խախտումներով պայմանավորված՝ մարդկանց կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին բարձր ռիսկայնության վնաս հասցնելու վտանգ է ներկայացնում, հանդուրժել եւ որեւէ միջոց չեն ձեռնարկել «Սուրմալու» առեւտրի կենտրոնի գործունեությունը դադարեցնելու ուղղությամբ: Փոխարենը, խախտումները վերացնելու ժամկետ տրամադրելով, «Սուրմալու» առեւտրի կենտրոնը շարունակել է իր գործունեությունը, որով, ըստ էության, ստացվում է, որ հնարավորություն է տրվել շրջանցել այդ խախտումները եւ շարունակել գործունեությունը: Ուստի, այս եւ այլ հանգամանքներով պայմանավորված, անհրաժեշտ է նախաձեռնել քրեական վարույթ եւ միջոցներ ձեռնարկել, որպեսզի քրեաիրավական գնահատական տրվի Տեսչական մարմնի իրավասու պաշտոնատար անձանց վարքագծին, եւ վերջիններիս նկատմամբ իրականացվի օբյեկտիվ ծառայողական քննություն»: Հիշեցնենք, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում հրդեհ ու պայթյուն էր տեղի ունեցել օգոստոսի 14-ին, որի հետեւանքով ունեցանք 1 անհետ կորած, 60 վիրավոր եւ 16 զոհ:

ԳՆԱՃԸ ՉԻ ՄԵՂՄՎԻ

ԳՈՐԾԱԴԻՐԸ ՆՈՐԻՑ ՄԱՆԻՊՈՒԼԱՑՆՈՒՄ Է

Կառավարության՝ օրերս ընդունած որոշման համաձայն՝ սեպտեմբերի մեկից ծերության թոշակը կավելանա 1900 դրամով՝ 28600 դրամի փոխարեն դառնալով 30500 դրամ: Համապատասխան որոշումը ընդունվել է կառավարության երեկվա նիստում: Աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը կավելանա շուրջ 3100 դրամով կամ 7.1 տոկոսով, զինվորական կենսաթոշակներինը՝ 5200 դրամով կամ 6.8 տոկոսով:

Իհարկե, առաջին հայացքից կառավարությունը դրական քայլ է անում ու մտածում հանրության մասին, սակայն, մասնագետների հավաստիացմամբ, իրականությունը բոլորովին այլ բանի մասին է վկայում: Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի կառավարման եւ գործարարության ամբիոնի վարիչ Կառլեն Խաչատրյանի համոզմամբ՝ թոշակների բարձացումը թոշակառուների սոցիալական վիճակը գուցե ինչ-որ չափով մեղմի, բայց, բնական է, օրեցօր ավելացող գնաճը չի կարող զսպել:

«Թոշակները, համաձան կառավարության կողմից ներկայացրած նախագծի, ընդամենը 7 տոկոսով կամ 3100 դրամով են բարձրանալու, ինչը մեր երկրի տնտեսությունում շուրջ 2 տարի առկա գնաճի հետ որեւէ կերպ համադրելի չէ: Եվ եթե ընդամենը 7 տոկոսով ավելացող թոշակը, որ կառավարության կողմից որպես ձեռքբերում է ներկայացվում, համադրենք պարենային ապրանքների գնաճի հետ, որ առնվազն 20-22 տոկոս է կազմել, կտեսնենք՝ այս հարցում գործադիրը, մեղմ ասած, ազնիվ չէ»,- ասում է տնտեսագետը:

-Իհարկե, բնական է, որ թոշակառուների սոցիալական խնդիրները մասամբ կարող են մեղմվել, բայց ասել, որ թոշակների՝ մի քանի դրամով բարձրացումը երկրում առկա գնաճը լիարժեքորեն կզսպի, միամտություն է: Համեմատության համար նշեմ, որ այս տարվա ընթացքում պատերազմի մեջ ու տնտեսական լրջագույն պատժամիջոցների տակ գտնվող Ռուսաստանի Դաշնությունը 2 անգամ թոշակ է բարձրացրել, ու ռուսատանաբնակ թոշակառուն այժմ, տարեսկզբի համեմատ, 20 տոկոսով ավելի է թոշակ ստանում: Միեւնույն ժամանակ պետք է նշենք, որ կառավարությունը ռեզերվներ ունի, որոնց արդյունավետ օգագործման մասով մոտ մեկ ամիս առաջ էր կառավարությունում քննարկում տեղի ունենում: Գործադրի ներկայացուցիչներն այն ժամանակ ասում էին, որ բյուջեում 40 միլիարդից ավելի դրամ ավելի հավաքած հարկ կար, ու կառավարությունը որոշեց, որ պահուստային ֆոնդից իր հայեցողությամբ տարբեր ծրագրեր կարող է ֆինանսավորել, այնինչ, կարծում եմ, ռեզերվային այդ կարող էր ուղղվել նաեւ սոցիալական խնդիրների լուծմանը:

-Այսինքն՝ սա իշխանությունների մանիպուլատիվ հերթական քա՛յլն էր:

-Միանշանակ: Տեսեք, կառավարությունը պետք է առաջնահերթություններ սահմանի, իսկ սոցիալապես խոցելի խմբի աջակցությունն այդ առաջնահերթությունների մեջ իր հատուկ տեղը պետք է ունենա: Այդ առաջնահերթությունները փաստացի չունենք, ընդհակառակը՝ կառավարությունը նախընտրում է, օրինակ, հարկային կոշտ վարչարարության միջոցով բիզնեսից հավաքած ավելի հարկը թողնել կառավարության պահուստային ֆոնդում, որ առաջիկա նիստերի համար մեքենաներ գնեն, պարգեւավճարներ տան, շենքեր վերանորոգեն եւ այլն, բայց դա չուղղեն պետության տնտեսության զարգացմանը կամ սոցիալապես խոցելի խմբերի խնդիրների լուծմանը:

-Կառավարության սահմանած մեկ այլ որոշման համաձայն՝ բանկային քարտով առեւտուր անելու դեպքում ՀՀ թոշակառուները հուլիսի 1-ից ամեն հաջորդ ամսվա կենսաթոշակի հետ կստանան գնման 10 տոկոսի չափով հետվճար, բայց ոչ ավելի, քան 5000 դրամը: Այսինքն՝ հիպոթետիկ ասած՝ եթե թոշակառուն քարտով 1 մլն դրամի առեւտուր անի, ապա, միեւնույնն է, որպես բոնուս 5000 դրամ է ստանալու:

-Այսպես կոչված «քեշբեքի» ծրագիրը մի քանի խնդիրներ ունի. առաջինը, ըստ պաշտոնական վիճակագրության, այն է, որ թոշակառուների մեկ երրորդը թոշակը կանխիկ է ստանում, ու կանխիկով թոշակ ստացողները, փաստորեն, ի սկզբանե զրկված են այս ծրագրից օգտվելու հնարավորությունից: Երկրորդն այն է, որ ծրագրից օգտվող թոշակառուները միայն 2 բանկից կարող են օգտվել, ու ստացվում է՝ կառավարությունը թոշակառուներին անուղղակի կերպով դեպի 2 բանկ է ուղղորդում: Այս բոլոր խնդիրները եթե ի մի բերենք, ակնհայտ է, որ կառավարությունը հերթական պոպուլիստական ծրագիրն է հրապարակ բերել ու դրանով փորձում է հավելյալ միավորներ վաստակել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

Նախօրեն «Հրապարակ»-ը գրել էր, որ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներից մեկը՝ Վահագն Ալեքսանյանը 2019թ. ընդունվել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի «Իրավագիտություն» մասնագիտության «Սահմանադրական իրավունք, պետության եւ իրավունքի տեսություն» մասնագիտացմամբ մագիստրատուրան եւ չի ավարտել: Ալեքսանյանին համալսարանից դուրս թողնելու գրության մեջ կարդում ենք.

«Հաշվի առնելով 2019-2020 ուսումնական տարվա ամառային լուծարքային քննաշրջանի արդյունքում գոյացած եւ համալսարանի կողմից սահմանված ժամկետում չմարված ակադեմիական պարտքը (12 եւ ավելի ակադեմիական կրեդիտ), ինչպես նաեւ 2020-2021 ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանի ընթացիկ ակադեմիական պարտքը՝ հրամայում եմ հեռացնել «Սահմանադրական իրավունք, պետության եւ իրավունքի տեսություն» մագիստրոսական ծրագրի առկա ուսուցման վճարովի համակարգի երկրորդ տարվա մագիստրատուրայի ուսանող Վահագն Հովիկի Ալեքսանյանին»:

Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի պետության եւ իրավունքի տեսության ու սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Արթուր Ղամբարյանի հետ, որը եւ եղել է պատգամավոր Ալեքսանյանի դասախոսը:

-Պարոն Ղամբարյան, հիշո՞ւմ եք Ձեր ուսանող Վահագն Ալեքսանյանին: Ինչպիսի՞ ուսանող է եղել նա:

-Անկեղծ ասած, հիշում եմ իրեն, բայց դա վաղուց էր: Իրեն դասավանդել եմ Իրավունքի հիմունքներ, որը ավելի շատ համակարգային առարկա է, եւ բազային կրթություն չունեցողները, ովքեր որ գալիս են իրավաբանականի մագիստրատուրա, այդ առարկան պարտադիր անցնում են: Նա մի քանի անգամ քննություն հանձնեց, եւ որքան ես եմ հիշում, չստացավ, բայց այնպես չէ, որ նա եղել է անկարող:

-Պարոն Ղամբարյան, այսինքն՝ կարո՞ղ ենք ասել, որ նա ընդհանուր բազային գիտելիքներ չի ունեցել եւ այդ պատճառով չի հաղթահարել քննությունները եւ դուրս է մնացել համալսարանից:

-Ես չեմ կարող ասել բոլոր առարկաների մասին, բայց կոնկրետ իմ առարկայի մասով չի ունեցել: Կարծում եմ՝ նա ժամանակ չէր տրամադրում սովորելու համար, քանի որ նրա մոտ վերլուծական կարողությունը կար, բայց գիտելիքը չկար, նա չէր կարդում, չէր սիրում աշխատել:

-Որքա՞ն ժամանակ եք դասավանդել Վահանգն Ալեքսանյանին:

-Կարծում եմ՝ մեկ սեմեստր, եւ հենց իմ քննությունը չի ստացել: Որքան հիշում եմ, գրավոր քննություն էր, իսկ մնացած առարկաների մասին ասել չեմ կարող: Հայ-ռուսական համալսարանում ուսանողին հնարավորություն են տալիս եւս մեկ քննություն եւ երկու լիկվիտ հանձնել, բայց նրա դեպքում երկուսն էլ չստացվեց:

-Իսկ հաճախե՞լ է դասերին, ինչպե՞ս է իրեն դրսեւորել, քանի որ Ազգային ժողովում նա աչքի է ընկնում միայն ագրեսիվ եւ կռվարար վարքագծով:

-Չեմ կարող նման բնորոշումներ տալ. իմ պատկերացմամբ՝ նա պարզապես չէր աշխատում: Կարծում եմ՝ երեւի ժամանակ չտրամադրեց, չստացվեց: Այսքանը:

Հ. Գ. Փաստորեն, պատգամավորը իր դասերը չի սովորել, բայց ամբիոնից բարոյախրատական դասեր է տալիս Նիկոլ Փաշինյանի ընդդիմախոսներին անգամիվ տարածելով երկրի բիվ մեկ ամբիոնից:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ՀԱԿԱՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ասիական զարգացման բանկի բժշկական ապահովագրության գծով փորձագետ Սամվել Խարազյանը սոցիալական ցանցի իր էջում ակտիվորեն հանդես է գալիս հակառուսական հայտարարություններով: Նախ նշենք, որ խոսքն այն անձի մասին է, որը երկար տարիներ աշխատել է կոռուպցիոն սկանդալներով հայտնի Պետական առողջապահական գործակալությունում՝ որպես բաժնի պետ եւ, որ ամենաուշագրավն է, ՊԱԳ այդ ժամանակվա պետ Սարո Ծատուրյանի հետ անգամ հասցրել է ձերբակալվել՝ պաշտոնեական դիրքի չարաշահման մեղադրանքով: Եվ, ահա, մայիսի 10-ին Ասիական բանկի փորձագետը սոցիալական ցանի իր էջում հրապարակել է այս լուսանկարը եւ գրել. «Այս տարի հոգեհանգիստն է, հուսով եմ՝ եկող տարի կթաղեն»: Հրապարակումը տարօրինակ է: Ինչու՝ որովհետեւ Խարազյանը, լինելով զարգացման բանկի փորձագետ, պետք է քաղաքական հարցերում առնվազն չեզոքություն դրսեւորի: Բացի այդ, նրա գործատուի՝ Ասիական զարգացման բանկի բաժնետերի մեջ կան երկրներ, որոնք առնվազն չեզոք են իրենց դրսեւորում Ռուսաստանի Դաշնության նկատմամբ:

Ստացվում է՝ Ասիական զարգացման բանկի փորձագետը հոգեհանգստի եւ թաղման մաղթանքներ է հղում մի կառույցի եւ երկրի, որը, նախ, ՀՀ ռազմավարական գործընկերն է, ապա նաեւ նորմալ հարաբերությունների մեջ է հենց Ասիական զարգացման բանկի բաժնետեր երկրների հետ: Հիշեցնենք, որ Ասիական զարգացման բանկի բաժնետերերից են Չինաստանը, Հնդկաստանը, Ղազախստանը, որոնք ջերմ հարաբերություններ ունեն Ռուսաստանի Դաշնության հետ ու թերեւս չեն կիսում թաղման մաղթանքները:

«ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԺՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Օգոստոսի 23-ին Լեհաստանում ՀՀ նախկին դեսպան Էդգար Ղազարյանը նոր շարժում եւ հանրահավաք էր նախաձեռնել: Նա իր գլխավորած «Անկախություն» շարժման մեկնարկը կապել էր Հայաստանի անկախության հռչակագրի հետ: Այդ օրը՝ երեկոյան, նա հանրահավաք էր կազմակերպել Հանրապետության հրապարակում, որին հրավիրել էր նաեւ Փաշինյանին, ինչպես նաեւ հանդիպում խնդրել կառավարության ղեկավարից՝ նրան ներկայացնելու հրաժարականի հիմնավորումները:

Մոտենալով կառավարության շենքին, զրուցելով ոստիկանների հետ ու վերադառնալով՝ հանրահավաքի մասնակիցներին Էդգար Ղազարյանը հայտնեց, որ վարչապետի հետ հանդիպումը չի կայացել, քանի որ Նիկոլ Փաշինյանը վախեցավ:

Այսպիսով, ArmLur.am-ը նրանից հետաքրքրվել է, թե որոնք են լինելու հաջորդ քայլերը: «Այդ մասին դեռ շուտ է խոսել: Մենք մեր հայտարարություններն արել ենք եւ սպասում ենք ԱԺ պատգամավորների գործողություններին: Կարծում եմ՝ պետք է սպասել այն խելամիտ ժամկետին, երբ նրանք կսկսեն գործողությունները: Ես շարունակում եմ աշխատել նույն ռեժիմով եւ ծանրաբեռնվածությամբ: Իմ աշխատանքի ռեժիմը չի փոխվել», - նշեց նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԱԺ–ՈՒՄ

Ազգային ժողովի նիստերի դահլիճում վերանոգորման աշխատանքներն են: ArmLur.am-ը տեղեկացավ, որ երկրի թիվ մեկ դահլիճի գորգերն են նորացվում: Մեր տեսախցիկը ֆիքսեց, որ Ազգային ժողովի աշխատակազմի նախաձեռնությամբ դահլիճի հին գորգերը փոխարինվում են նորերով: ArmLur.am-ի հարցին, թե ինչքան են արժեցել նոր գորգերը, ու ինչու է հենց հիմա որոշվել փոխարինել դրանք, Ազգային ժողովից հստակ պատասխան չտվեցին՝ հորդորելով գրավոր հարցում ուղարկել: Իհարկե, կուղարկենք. թերեւս ընդդիմադիր խոսքից զրկված, միայն իշխանությունների տեսակետները ներկայացնելու հարթակ դարձած խորհրդարանը նոր շնչով է պատրաստվում աշնանային նստաշրջանին:

ԵՐԵՍԸ ՊԱՏՌԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի նախկին քաղաքապետ, կատակերգակ դերասան Հայկ Մարությանն առաջիկայում նոր շոու կմատուցի մարդականց: Մամուլում ավելի վաղ էր տեղեկություն տարածվել այն մասին, որ Նիկոլ Փաշինյանի երբեմնի սիրելին պատրաստվում է մոնոներկայացմամբ (Stand Up) հանդես գալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ներկայացման ժամանակ Հայկ Մարությանը օգտագործելու է Նիկոլ Փաշինյանի ու կառավարական կաբինետի այլ անդամների՝ իրեն ուղարկված ձայնային հաղորդագրությունները (voice message): «Այդ հաղորդագրություններում այնպիսի դրվագներ կան, որտեղ Մարությանին կառավարվական կաբինետից հրահանգ կամ որոշումներ են իջեցվում, թե այս կամ այն հարցի հետ ինչպես վարվի, կամ ինչ ելույթ ունենա. դրանք կինչեն դահլիճում»,- ասաց մեր զրուցակիցը: Մարությանի կարծիքը, իհարկե, նույնպես փորձեցինք լսել, բայց իր գրասենյակի հեռախոսահամարն անհասանելի էր, իսկ տեղեկատվություն ստանալու մեր հարցմանն այդպես էլ պատասխան չեղավ:

«Ժողովուրդ» օարթերթը տեղեկացավ, որ Մարությանի այս՝ «ձայնային հաղորդագրություններով» իշխանավորների երեսը պատռելու մտադրության մասին գործադրի անդամներին շշուկներ են հասել, ինչից հետո նրանք նախկին քաղաքապետին լռեցնելու ազդակներ են հղում: Ու բնավ պատահական չէ, որ Պետական վերահսկողական ծառայությունն օրերս քաղաքապետարանի մասով «աղմկոտ» բացահայտումներ է արել: Խոսքն, ի դեպ, Հայկ Մարությանի կառավարման՝2018-ից ի վեր ընկած ժամանակահատվածի մասին է: Ըստ այդմ՝ քաղաքապետարանում 8.5 մլրդի խախտումներ են հայտնաբերվել, ինչպես նաեւ մայրաքաղաքը զրկվել է ավելի քան 6 մլրդ դրամի հավելյալ եկամուտ ունենալուց: Ընտրություններից մեկ տարի առաջ երբեմնի սիրելի «սուպերքաղաքապետին» ՔՊ-ն սկսել է հարվածել, որի կառավարման շրջանում մայրաքաղաքի եւ որեւէ մի ոլորտում դրական շոշափելի տեղաշարժ այդպես էլ չգրանցվեց: Չի բացառվում՝ վերջին պահին նա այդ ձայնային հաղորդագրությունները չօգտագործի՝ հաշվի առնելով իր շուրջ սեղմվող օղակը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՈՒՆԵՆԱՆ

Օգոստոսի 31-ին Բրյուսելում կհանդիպեն Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները:

Կառավարության լրատվական ծառայությունից հաստատեցին սպասվող հանդիպման լուրը:

Փաշինյանի եւ Ալիեւի սպասվող հանդիպման մասին երեկ առաջինը հայտնեցին ադրբեջանական լրատվամիջոցները:

Ավելի ուշ Հայաստանի կառավարությունից պարզաբանեցին՝ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը քննարկելու են այն հարցերը, որոնք եղել են նախորդ հանդիպման օրակարգում: Այլ մանրամասներ պաշտոնյաները չեն նշում:

Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների նախորդ հանդիպումը եւս կայացել է Բրյուսելում երեք ամիս առաջ՝ մայիսի 22-ին, Եվրամիության խորհրդի նախագահի նախաձեռնությամբ:

Փաշինյանն ու Ալիեւը այն ժամանակ պայմանավորվել էին սահմանազատման ու սահմանագծման հանձնաժողովների հանդիպում կազմակերպել: Հաջորդ օրը Երեւանն ու Բաքուն գրեթե միաժամանակ հրապարակեցին սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովների կազմը: Մեկ օր անց դրանց ղեկավարները՝ Հայաստանի ու Ադրբեջանի փոխվարչապետեր Մհեր Գրիգորյանն ու Շահին Մուստաֆաեւն առաջին անգամ հանդիպեցին սահմանին՝ Երասխի ուղղությամբ: Քննարկել էին կազմակերպչական հարցեր ու պայմանավորվել երկրորդ հանդիպումն անցկացնել Մոսկվայում: Դա տեղի կունենա օգոստոսի 30-ին. «Ազատությանը» փոխանցեցին փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակից:

Հանձնաժողովների ղեկավարների մոսկովյան հանդիպումից մեկ օր անց Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները կմեկնեն Բրյուսել:

Սա Մհեր Գրիգորյանի եւ Շահին Մուստաֆաեւի ղեկավարած հանձնաժողովների երկրորդ հանդիպումն է:

Գրիգորյանն ու Մուստաֆաեւն առաջին անգամ հանդիպել են մայիսի 24-ին: Փաշինյան-Ալիեւ մայիսի 22-ի բրյուսելյան բանակցություններից հետո հայտարարվեց Հայաստանում եւ Ադրբեջանում սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովներ ստեղծելու մասին: Մեկ օր անց Երեւանն ու Բաքուն գրեթե միաժամանակ հրապարակեցին հանձնաժողովների կազմը: Եվ Հայաստանի, եւ՛ Ադրբեջանի պարագայում հանձնաժողովները գլխավորում են փոխվարչապետերը՝ Մհեր Գրիգորյանն ու Շահին Մուստաֆաեւը, որոնք նաեւ տրանսպորտային ապաշրջափակման եռակողմ՝ հայադրբեջանառուսական հանձնաժողովների անդամներ են:

Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետերի առաջին հանդիպումը տեղի ունեցավ Երասխ բնակավայրի ուղղությամբ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության Նախիջեւանի սահմանին: Նրանք վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ հանձնաժողովների շրջանակներում աշխատանքներ տանելու սահմանազատման եւ այլ համապատասխան հարցերի, այդ թվում՝ սահմանային անվտանգության ապահովման հարցերի շուրջ: Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետերը նաեւ պայմանավորվեցին երկրորդ հանդիպումն անցկացնել Մոսկվայում, երրորդը՝ Բրյուսելում:

Սահմանազատման ու սահմանագծման հարցերով հանձնաժողովների երկրորդ հանդիպմանը կհաջորդի օգոստոսի 31-ին Բրյուսելում Փաշինյան-Ալիեւ հանդիպումը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ԴԵՍՊԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ նախագահի հրամանագրով՝ Ռուբեն Սադոյանը հետ է կանչվել Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից: Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաեւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ռուբեն Սադոյանին հետ են կանչել Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:

Նախագահի մեկ այլ հրամանագրով՝ այդ պաշտոնում նշանակվել է Աշոտ Սմբատյանը: Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաեւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ Աշոտ Սմբատյանին նշանակել են Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Թբիլիսի):

ՍԱՀՄԱՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ

Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հերթական հանդիպումը տեղի կունենա օգոստոսի 31-ին Բրյուսելում: Այս մասին հայտնեցին Կառավարության լրատվական ծառայությունից: Հանդիպման օրակարգի վերաբերյալ մանրամասներ չեն հաղորդվում:

Նախորդ անգամ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը հանդիպել էին Բրյուսելում մայիսի 22-ին՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ: Այդ հանդիպման արդյունքում կողմերը համաձայնել էին ստեղծել Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովներ:

Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետերի՝ Մհեր Գրիգորյանի եւ Շահին Մուստաֆաեւի առաջին հանդիպումը տեղի էր ունեցել մայիսի 24-ին Հայաստանի եւ Ադրբեջանի միջպետական սահմանին՝ Երասխում: Երկրորդ հանդիպումը նախատեսված է օգոստոսի 30-ին Մոսկվայում:

ՀՈՒՇԱՐՁԱՆ ԿՏԵՂԱԴՐՎԻ

Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Բերձորում (Լաչին) հուշարձան կտեղադրվի, որը կոչված է «վախեցնելու» հայերին: Այս մասին հայտնում են ադրբեջանական ՋԼՄ-ները: Ըստ տեղեկությունների՝ «Երկաթե բռունցք» հուշարձանը հասցվել է քաղաք: Այն կտեղադրվի քաղաքի կենտրոնում: «Երկաթե բռունցքն» Ադրբեջանում գլխավոր գործողություններից մեկն էր Հայաստանի եւ Արցախի Հանրապետության դեմ 44-օրյա պատերազմում:

ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՏԵՂԱԿԱԼ

ՍԻՍԻԱՆՈՒՄ ՆՈՐ ԿՐՔԵՐ ԵՆ ՀԱՄՈՒՆԱՆՈՒՄ

Ուշագրավ զարգացումներ՝ Սիսիան քաղաքի ոստիկանապետի տեղակալ Գարիկ Մուրադյանի դեմ հարուցված քրեական գործով: ԱԱԾ-ի բացահայտումից մեկ տարի անց Սիսիանի ոստիկանապետի տեղակալ Գարիկ Մուրադյանը դատարանում արդարացվել է: Ի դեպ, ըստ մարզում տարածված լուրերի՝ արդարացված Գարիկ Մուրադյանը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Համբարձումյանի աջակցությունը միշտ ունեցել է: Լուրեր կան, որ նրա արդարացումը պատահական չէ. առաջիկայում ամեն ինչ անելու են՝ նրան նշանակեն Սիսիանի ոստիկանապետ, ինչը մարզում մեծ աղմուկի պատճառ կդառնա: Ստացվում է, որ ՔՊ-ի ցանկալի մարդիկ ուժային կառույցների բացահայտումները ոնցատակ են տալիս եւ դատարաններում արդարացվում են, ավելին՝ նոր պաշտոնների հավակնություններ ունեն:

Հիշեցնենք, որ 2021 թվականի ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական անվտանգության, կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի եւ Սյունիքի մարզային վարչության աշխատակիցները, հետեւողական պայքար տանելով կոռուպցիոն երեւույթների դեմ, համագործակցելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի եւ ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կոռուպցիոն եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչության աշխատակիցների հետ, բացահայտել են ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի եւ ոստիկանության նույն բաժնի այլ աշխատակիցների կողմից խարդախությամբ ուրիշի՝ առանձնապես խոշոր չափերի գույքը հափշտակելու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ պաշտոնեական լիազորությունները անցնելու դեպքեր:

Այսպես, ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Գարիկ Մուրադյանը, ոստիկանության նույն բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչներ Ա.Բ.-ի եւ Գ.Հ.-ի հետ նախնական համաձայնությամբ, 2020 թվականի դեկտեմբերի 14-ից մինչեւ 2021 թվականի մարտի 24-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում քաղաքացի Հ.Գ.-ի անասնագոմերից կատարված հափշտակությունների, ինքնիրավչությունների եւ այլնի վերաբերյալ համապատասխան հաղորդումներ չեն ընդունել, կատարված հանցագործությունների դեպքերը պատշաճ կարգով չեն հաշվառել, փոխարենը, չունենալով իրավական ակտերով նախատեսված որեւէ լիազորություն, ձեռնամուխ են եղել կողմերի միջեւ առաջացած վեճն օրենսդրությամբ չնախատեսված կարգով լուծելուն՝ այդկերպ ակնհայտորեն դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից:

Մասնավորապես՝ նշված պաշտոնատար անձինք, փաստացի ստանձնելով նախկին անասնատերերի իրավունքների պաշտպանությունը, արտադատական կարգով լուծել են կողմերի միջեւ ծագած վեճերը, որից հետո Հ.Գ.-ից նյութական օգուտներ ստանալու շահադիտական դրդումներով՝ ձեռնամուխ են եղել նրան ունեզրկելու, առանձնապես խոշոր չափերի գույք հափշտակելու գործընթացի իրականացմանը, որի համար տարբեր պատրվակներով տուժողից ստացել են առանձնապես խոշոր չափի՝ 2.550.000 ՀՀ դրամ գումար, 1.000.000 ՀՀ դրամ արժողությամբ ավտոմեքենա, որոնք խարդախության եղանակով հափշտակել են:

Ավելին՝ անասնագողության դեպքերն իբր բացահայտելու պատրվակով նրանք անասնագոմի տարածքից հանել են ընդհանուր 2.500.000 ՀՀ դրամ արժողությամբ, տուժողին պատկանող տեսախցիկները եւ դրանց բաղկացուցիչ սարքերը, որից հետո հրաժարվել են դրանք վերադարձնել սեփականատիրոջը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՐՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՔՐԱՄԱՄԵՐՈՒՄ

Տեւական ժամանակ է, ինչ ՀՀ ԱԱԾ-ն պատշոնական հաղորդագրություն է տարածում, որ հայերեն լեզվին ազատորեն տիրապետող օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչները ծանոթություններ են հաստատել ՀՀ զինված ուժերում տարբեր պատշոններ զբաղեցնող անձանց հետ՝ հնարավորություն ունենալով համացանցային ծանոթությունները վերածել մտերիմ հարաբերությունների, իսկ այնուհետ նաեւ առաջարկել գումարի դիմաց համագործակցել իրենց հետ եւ տրամադրել ռազմական բնագավառին վերաբերող տեղեկություններ, մասնավորապես՝ ՀՀ զինված ուժերի տարբեր զորամասերի տեղակայման վայրերի, անձնակազմի, զենքի, զինամթերքի, զինտեխնիկայի քանակի եւ տեսակի, զորամասերի եւ դրանց հրամանատարական կազմի, պատշոնական շրջանների, ինժեներական կառույցների, սարքավորումների եւ այլնի վերաբերյալ:

Նշված եղանակով լրտեսական գործունեություն իրականացրած անձինք գործակալական ցանցում ներգրավել են շուրջ երկու տասնյակ ՀՀ քաղաքացիների, որոնք ՀՀ զինված ուժերում զբաղեցրել են տարբեր պաշտոններ եւ ի պաշտոնե հնարավորություն են ունեցել առնչվելու պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների եւ փաստաթղթերի հետ:

Հիշյալ զինծառայողները տվել են իրենց համաձայնությունը եւ գումարի դիմաց բջջային տարբեր հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին մաս-մաս փոխանցել են ծառայության բերումով իրենց հասանելի դարձած կամ օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցիչների պահանջով հավաքած ռազմական կամ այլ բնույթի տեղեկությունները, ի վնաս Հայաստանի Հանրապետության՝ կատարել դավաճանական գործողություններ:

Մեզ հասած եղեկությունների համաձայն՝ Արթուր Սարդարյանը Ազգային անվտանգության ծառայության կողմից 2021 թվականին պետական դավաճանության մեադրանքով կալանավորվել էր, եւ նրա դեմ հարուցված քրեական գործը ուղարկվել է դատարան: Դատարանը, հաշվի առնելով պետական գաղտնիքի գործոնը, դատական տեղակատվական համակարգում փակել է քրեական գործը, եւ այն հասանելի չէ ոչ ոքի: Սակայն, ըստ մեզ հասած տեղեկությունների, պետական դավաճանության համար մեղադրվող Արթուր Սարդարյանը դատարանի որոշմամբ արդարացվել է: Ստացվում է, որ նախաքննական մարմինը մեծ աղմուկ է բարձրացնում, թե պետական դավաճանության արդյունքում զինվորականները թշնամուն տեղեկություններ են տվել, սակայն մարդիկ դատարանում արդարացվում են, եւ դեռ ավելին՝ խախտում են անձի անմեղության կանխավարկածը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

16 ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի դեպքի առթիվ նախաձեռնված վարույթով քննությունը շարունակվում է: Քրեական գործի շրջանակում Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանը միջնորդագրեր է ուղարկել ՀՀ քաղաքաշինության տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու եւ վերացնելու ուղղությամբ: Ստուգման արդյունքներով՝ օբյեկտում հայտնաբերվել են տեխնիկական եւ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների 16 խախտումներ, եւ արձանագրվել դրանց վերացման ժամկետները: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ հայտնել է, որ դեռեւս 2021 թվականին փաստաբան Տիգրան Մուրադյանն է այս հարցը բարձրացրել, միջնորդություն է ներկայացրել Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանին, սակայն վերջինս անուշադրության է մատնել միջնորդությունը: Եվ, ահա, միայն 1 տարի անց, երբ տեղի ունեցավ «Սուրմալու»-ի ողբերգական դեպքը, դատախազ Սեւակ Հովհաննիսյանը որոշեց տեղից շարժվել:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

Օգոստոսի 25-ին մահվան ելքով վրաերթ է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 00:40-ի սահմանում Mercedes մակնիշի ավտոմեքենան Ավշար գյուղի Խորենացի փողոցում դուրս է եկել հանդիպակաց երթեւեկելի գոտի եւ նշված փողոցի 24 հասցեի դիմաց վրաերթի ենթարկել Ավշար գյուղի բնակիչ 44-ամյա Ռուբիկ Անդրեասյանին: Վրաերթի ենթարկվածը, որը մի քանի մետր շպրտվել ու հայտնվել է հարեւանի տան բակում, տեղում մահացել է: Վարորդը դեպքի վայրից դիմել է փախուստի: Mercedes-ը երբ դուրս է եկել հանդիպակաց երթեւեկելի գոտի, բախվել է բազալտե սալիկին, առաջ ընթանալով՝ կոտրել գազատար խողովակի հենասյունն ու բնակչի տան քարե պարիսպը: Ավտոմեքենան վարել է Արարատի մարզի Ոսկու կորզման ֆաբրիկայի Բանավան թաղամասի բնակիչը՝ 22-ամյա Տ. Թ-ն: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ վերջինիս հայտնաբերելու ուղղությամբ: Դեպքի վայրում հավաքված գյուղացիներն ասում են, որ նշված վայրում հաճախակի են ավտովթարներ լինում, եւ որ բնակիչները բազմիցս դիմել են պատկան մարմիններին, որպեսզի այդ հատվածում, որտեղ կա դպրոց, մանկապարտեզ, տեղադրվի կամ արագաչափ, կամ արհեստական անհարթություններ:

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է

Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի շենքերից մեկի բակում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ 22-ամյա աղջիկը դանակահարել է 40-ամյա հարեւանին: Տեղեկությունը հայտնում է ոստիկանությունը: Տղամարդը որովայնի կտրած-ծակած, թափանցող վնասվածքով տեղափոխվել է բուժկենտրոն: Ոստիկանների բացատրական աշխատանքի արդյունքում 22-ամյա կինը ներկայացել է Վաղարշապատի բաժին եւ խոստովանել արարքը: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 40 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԳՏՆՎԵԼ Է

Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Բերքաբեր գյուղի բնակչուհի, 1973թ.-ին ծնված Ալվարդ Դիլբարյանը օգոստոսի 13-ին տնից դուրս է եկել եւ այլեւս չի վերադարձել: ՀՀ ոստիկանությունը հաղորդագրություն է տարածել նրա անհետանալու մասին: Բերքաբերը գտնվում է ներկայումս հայ-ադրբեջանական փաստացի սահման հանդիսացող Ջողազի ջրամբարի աջ ափին: Բերքաբերի վարչական ղեկավարը բացառել է, որ Ալվարդ Դիլբարյանը կարող էր անցնել արհեստական լճի ձախ՝ ադրբեջանական ափը, որովհետեւ նա չէր կարող հաղթահարել ջրամբարը կամ էլ անցնել ջրամբարի պատվարի վրայով, որի տարբեր կողմերին հայկական եւ ադրբեջանական զինուժի հենակետեր են տեղակայված: Բերքաբերի բնակիչները հայտնեցին, որ Ալվարդ Դիլբարյանը հոգեկան հիվանդ չէ, սակայն տարօրինակություն ունի. նա նախկինում մի քանի օրով իրենց տնից անհետացել է, հետո ետ վերադարձել: Օգոստոսի 12-ին տնից հեռանալիս Ա. Դիլբարյանի մոտ բջջային հեռախոս չի եղել, ինչը դժվարեցնում էր նրան գտնելու գործը: Բերքաբերի վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանը հայտնեց, որ օգոստոսի 22-ին Ալվարդ Դիլբարյանը ուրիշի հեռախոսահամարից զանգահարել, հայտնել է , որ ինքը գտնվում է Գավառում: Վարչական ղեկավարը բացառեց, որ կինն այլեւս վերադառնալու է Բերքաբեր: Ա. Դիլբարյանը տարօրինակություն ունի, որը նախկինում դրսեւորվել է ընտանիքից եւ Բերքաբեր գյուղից հեռանալով:

ՀԻՆ ՎԱՆՔԵՐԸ ՔԱՆԴՎՈՒՄ ԵՆ

Մշկավանքը գտնվում է Կողբ գյուղից 3 կմ հարավ՝ անտառապատ, բարձրադիր սարահարթի վրա, Կողբից դեպի վանական համալիր առկա է անտառով ձգվող, գրունտային՝ դժվարանցանելի ավտոճանապարհ: Մշկավանքը ներառված է Հայաստանի պետական պահպանության հուշարձանների ցանկում: Այն հանդիսանում է չգործող վանական համալիր, որը կազմված է եղել մի շարք շինություններից: Դրանցից պահպանվել են Սուրբ Աստվածածին եկեղեցին, նրան կից գավիթը, հարակից գերեզմանոցը, կիսավեր մատուռը: Հիմնական շինությունը կառուցված է դեղնակարմրավուն ֆելզիտի խոշոր սրբատաշ քարերով: Վանքի մոտակայքում պահպանվել են վանքապատկան շինությունների ավերակներ: Վանական համալիրում առկա են հարուստ խաչքանդակներ եւ վիմական արձանագրություններ: Այն վերանորոգվել է 1955-1960-ական թթ.-ին ճարտարապետներ Հ. Հակոբյանի եւ Յ. Թամանյանի նախագծերով: 2016թ. պետական բյուջեից 10 միլիոն դրամ ֆինանսավորմամբ Մշակույթի նախարարությանը կից «Էն-Սի-Սի» ընկերությունը իրականացրել է Մշկավանքի գմբեթի տանիքի 30 քառակուսի մետր հատվածի ֆելզիտի մաշված սալիկների փոխարինում բազալտե սալիկներով: Այդ վերանորոգման նախագծի ճարատարապետը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի շինարարական բաժնի ծրագրի տնօրեն Մերի Դանիելյանն էր: Ներկայումս Մշկավանքի վիճակը մտահոգիչ է, Սուրբ Աստվածածին եկեղեցու խորանը, քիվերը, ճակատը վատթար վիճակում են, գավթի մի պատը փլուզվում է, սակայն այդ խնդիրը չի մտահոգում ոչ ԿԳՄՍ նախարարությանը, ոչ Հայ առաքելական եկեղեցուն:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏ

ԱՎԱՐՏՎԵԼ Է ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԱՐՀԱՆՈՒՄԸ

Ավարտվել է մոնումենտալ արվեստի հուշարձանների տարհանումը Բերձոր, Աղավնո եւ Ներքին Սուս համայնքներից:

Այս մասին հայտնում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը՝ մանրամասնելով, որ, ընդհանուր առմամբ, երեք բնակավայրերից դուրս է բերվել մոտ 46 մոնումենտալ արվեստի հուշարձան, ինչպես նաեւ Բերձորի քաղաքային գրադարանի գրքային ֆոնդը, որոնք տեղափոխվել են նախատեսված վայր:

«Տարհանվել են խաչքարեր, հուշարձաններ, հուշաքարեր, որոնք նվիրված են ազգային հերոսներին, Հայոց ցեղասպանությանը, հիշարժան տարբեր իրադարձությունների»,- մանրամասնեց փոխնախարարը՝ համոզմունք հայտնելով, որ իրենց տեղերում մնալու դեպքում այդ հուշարձաններն ադրբեջանցիների կողմից կենթարկվեին վանդալիզմի:

«Տեղափոխված կոթողների տեղակայման ուղղությամբ այժմ մի քանի տարբերակներ ենք քննարկում: Համապատասխան առաջարկներ են ներկայացրել Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը, Արցախի պետական համալսարանը, անհատներ: Մասնավորապես՝ ՀԱԵ Արցախի թեմի կողմից առաջարկվել է Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու մայր տաճարի տարածքում համապատասխան պուրակ ստեղծել, որտեղ կտեղադրվեն տարհանված խաչքարերն ու հուշակոթողները: Ներքին Սուսի Հերոսների պուրակի հովանավորն էլ ցանկություն է հայտնել, որպեսզի այն վերականգնվի Ստեփանակերտում կամ Մարտակերտում»,-հավելեց Հովհաննիսյանը՝ ընդգծելով, որ բոլոր տարբերակները կքննարկվեն սեղմ ժամկետներում, եւ խնդրին լուծում կտրվի:

Տարհանված կոթողների թվում առանձնակի արժեք է ներկայացնում նաեւ Աղավնոյի Սուրբ Նահատակաց եկեղեցուց տեղափոխված խաչքարը, որը թվագրվում է 11-12-րդ դարերին:

Փոխնախարարի խոսքով՝ խաչքարը կտրամադրվի Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանին:

Օգոստոսի սկզբին հայտարարվեց, որ Արցախի Բերձոր քաղաքի եւ Աղավնո գյուղի բնակիչներին իրենց բնակավայրերը լքելու համար ժամանակ է տրվում մինչեւ 2022 թ. օգոստոսի 25-ը, քանի որ Ադրբեջանն ավարտել էր Արցախը Հայաստանին կապող նոր միջանցքի իր հատվածի շինարարությունը եւ միջանցքը նոր երթուղի տեղափոխելու պահանջ էր ներկայացրել:

Օգոստոսի 17-ին Երեւանում Ռուսաստանի դեսպանության խորհրդական-դեսպանորդ Մաքսիմ Սելեզնյովը հայտարարել էր, որ ռուս խաղաղապահները ոչ մի սանտիմետր չեն տեղաշարժվի Լաչինի գործող միջանցքից, քանի դեռ նոր ճանապարհը չի շահագործվել:

Արցախի Հանրապետության խորհրդարանական 5 խմբակցությունների ղեկավարներն օգոստոսի 23-ին հանդիպել են ՌԴ խաղաղապահ զորակազմի ղեկավարության հետ: Հանդիպման ընթացքում ՌԴ խաղաղապահ զորակազմի պատասխանատուների կողմից տրվել են պարզաբանումներ: Մասնավորապես, հղում կատարելով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը՝ նշվել է, որ նոր երթուղին ունենալու է նույն միջանցքի իրավական կարգավիճակը, եւ պահպանվելու են բոլոր անվտանգային բաղադրիչները՝ սկսած 5 կմ-ոց անվտանգային գոտուց մինչեւ ՌԴ խաղաղապահ ուժերի անցակետերի տեղակայում:

ՈՌՈԳԵԼԻ ՀՈՂԵՐ

ՋՐԱՄԲԱՐՆԵՐ ՉԿԱՌՈՒՑՎԵՑԻՆ

Տավուշի մարզի Ոսկեպար, Կողբագետ, Քարահան, Հախում գետերի ջրերը հոսում են Ադրբեջան, ոռոգում այդ երկրի տարածքները: Հարկ է Տավուշում ոռոգման ջրամբարներ կառուցել եւ ավելացնել մարզի ոռոգելի հողերը, որոնք այժմ 6 հազար հեկտար են կազմում:

2017թ. Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը հայտարարել էր, որ գոյություն ունի Տավուշում փոքր եւ միջին ջրամբարների կառուցման ծրագիր, ինքը ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին Տավուշի մարզում 14 փոքր եւ միջին ջրամբարների կառուցման ծրագիր է ներկայացրել: Դրանք հնարավորություն կտային մինչեւ 10 միլիոն խորանարդ մետր ջուր կուտակել, որի շնորհիվ ոռոգելի կդառնար 4 հազար հեկտար տարածք: Այդ ջրամբարների կառուցման ընդհանուր ծախսը կազմում էր 8 միլիարդ 450 միլիոն դրամ: Մարզպետ Աբովյանը հայտարարել էր, որ սահմանագոտում կառուցվելիք Հախումի եւ Կողբի ջրամբարներում նախատեսվում է կուտակել 2 միլիոն խորանարդ մետր ջուր, որ փոքր եւ միջին ջրամբարներ կառուցելու համար անհրաժեշտ ֆինանսների խնդիրը լուծելու նպատակով մտադիր են ներգրավել նաեւ մասնավոր ներդրողներ:

2019-ից Նոյեմբերյանի քաղաքապետարանում Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանի մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ նշվեց, որ սահմանամերձ Բերդավան գյուղում ոռոգելի տարածքները կարելի է մեծացնել Կողբում կամ Բերդավանում ոռոգման ջրամբար կառուցելու դեպքում: Խորհրդակցության ժամանակ նշեց, որ ծրագիր է եղել Հայաստանում ոռոգման 10 ջրամբարներ կառուցելու, սակայն դրանց շինարարությունն այդպես էլ չի սկսվել: Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը 2019 թվականին հայտարարել էր, որ Տավուշի մարզում գյուղատնտեսական ներուժի չնչին տոկոսն է օգտագործվում, մարզում ոռոգելի է ընդամենը 4500 հեկտար հող: Մարզպետը հայտնել էր, որ առաջիկա մեկ տարում մարզում ոռոգելի հողերի քանակը կկրկնապատկվի: Նա ասել էլ, որ առաջիկա 2 տարվա ընթացքում՝ 2019-2021 թվականներին, Տավուշում անմշակ հող չի լինելու՝անկախ այդ հողերի սեփականության ձեւից. դա կարվի ոչ միայն օրենսդրական նախաձեռնությունների, այլ նաեւ անհատական նախաձեռնությունների արդյունքում: Մարզպետը մեծ խոստումներ տվեց, սակայն այդ խոստումներն իրականություն չդարձան, Հայկ Չոբանյանն էլ 2021 թվականի ապրիլից Տավուշի մարզպետ չէ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ճՏՊ. 3 մարդ զոհվել է, 9-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ՎՏԲ-Հայաստան» բանկ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

«ՎՏԲ»-ն մեկնարկել է Ռուսաստանից Հայաստան դրամական փոխանցումներ ազգային արժույթով: Ծառայությունը հասանելի է ստացողի բանկային տվյալների միջոցով: Փոխանցումը մուտքագրվում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդի հաշվին մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկային տվյալների միջոցով գումար փոխանցելու համար անհրաժեշտ է օգտվել ռուսական ՎՏԲ Мобайл բջջային հավելվածից կամ ՎՏԲ Онлайн-ի վեբ տարբերակից: Այնուհետեւ անհրաժեշտ է անցնել Платежи բաժին, ընտրել По реквизитам в валюте գործարքը, ելքագրման հաշիվը, մուտքագրել փոխանցվող գումարը եւ նպատակը, բանկի կոդը, նշել ստացողի ԱԱՀ-ն, հասցեն եւ հաշիվը: ՀՀ դրամով փոխանցում կատարելու համար հաճախորդին նախապես կառաջարկվի բացել ընթացիկ հաշիվ իր ընտրած արժույթով, գնել այդ արժույթով գումար, որից հետո փոխանցել այն:

ՌԴ-ից Հայաստան յուրաքանչյուր դրամական փոխանցման առավելագույն գումարը կազմում է մինչեւ 20 մլն ռուբլի (համարժեք ՀՀ դրամ), միջնորդավճարը կազմում է փոխանցվող գումարի 1%-ը՝ 1500 ՀՀ դրամից մինչեւ 20 հազար ՀՀ դրամ:

«Ռուսական խոշորագույն բանկերի նկատմամբ կիրառված սահմանափակումներն ազդել են առաջին կիսամյակում Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ միջազգային փոխանցումների իրականացման ծավալների եւ հնարավորության վրա:

Այդ պատճառով «ՎՏԲ»-ն գործարկել է ծառայություն, որից կկարողանան օգտվել մեր բազմաթիվ հաճախորդները եւ նրանց ընտանիքները: Նոր ծառայության շնորհիվ փոխանցումները հարմար եւ հասանելի կլինեն, ինչպես նախկինում, իսկ «ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդները կկարողանան Ռուսաստանից փոխանցված միջոցները ստանալ արագ, հեշտ եւ ցանկացած պահի: Հաճախորդի համար ծառայության հիմնական առավելությունն այն է, որ բանկ այցելելու անհրաժեշտություն չկա, քանի որ գումարը մուտքագրվում է անմիջապես ստացողի հաշվին կամ քարտին եւ, որ ամենակարեւորն է, անմիջապես ազգային արժույթով»,- նշում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի մանրածախ բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն Տաթեւիկ Բադալյանը:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՀԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Մեկնարկում է բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների հայտագրման գործընթացը:

ՀՀ պետական եւ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կանոնների համաձայն՝ դիմորդը հայտագրումն իրականացնում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի dimord.am կայքում սեպտեմբերի 5-ից մինչեւ սեպտեմբերի 25-ը՝ ժամը 18:00-ն:

Հեռակա ուսուցման ընդունելության քննությունները կազմակերպում եւ անցկացնում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը: Քննություններն անցկացվում են գրավոր՝ թեստերի միջոցով: ՀՀ ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի քննությունը հանձնում են միեւնույն օրը: Քննությունների օրերը, ըստ առարկաների, հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

Դիմորդն ընդունելության դիմում-հայտում իր ընտրությամբ եւ ցանկացած հաջորդականությամբ հայտագրում է մասնագիտությունները (կրթական ծրագրերը) եւ տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված առավելագույնը երկու ընդունելության քննությունները: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ բուհի մինչեւ երեք մասնագիտությունների (կրթական ծրագրերի) վճարովի մրցույթին, որոնց համար սահմանված են ընդունելության միեւնույն քննությունները:

Միասնական քննություններն անցկացվում են հոկտեմբերի 20-27-ը: Ներբուհական քննությունների անցկացման համար բուհերի կողմից կարող են սահմանվել այլ ժամկետներ: Քննություններն անցկացվում են քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչեւ տվյալ տարվա հոկտեմբերի 5-ը հաստատում է ԳԹԿ-ը տնօրենը:

Բուհ ընդունված դիմորդների ցուցակները հաստատվում են մինչեւ հոկտեմբերի 30-ը:

Ներբուհական քննությունների անցկացման համար ԳԹԿ-ի տնօրենի հրամանով մինչեւ տվյալ տարվա սեպտեմբերի 27-ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ:

Բուհերի ընդունելության մրցույթը, բացառությամբ ներբուհական քննություններ հանձնած դիմորդների մրցույթի, անցկացնում է ԳԹԿ-ն՝ ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի), հատկացված տեղերի եւ միավորների: Մասնագիտությունների (կրթական ծրագրերի) մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության (կրթական ծրագրի) գերակայությամբ:

Դիմորդները կարող են պահպանել տվյալ տարվա միասնական եւ տվյալ բուհի համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար հանձնած ներբուհական քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ:

Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով նաեւ միասնական եւ ներբուհական կարգով հանձնած քննական առարկայի գնահատականը, տվյալ առարկայից հանձնել քննություն: Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:

Առաջին հայտագրված մասնագիտության (կրթական ծրագրի) մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան, դիմորդի միավորներով, եթե նշված մասնագիտություններում առկա են թափուր տեղեր:

Նշենք, որ ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել են ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022/2023 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության տեղերը՝ ըստ բուհերի եւ մասնագիտությունների:

Ըստ այդմ՝ ՀՀ պետական բուհերին հատկացվել է 7726 հեռակա ուսուցման ընդունելության տեղ: Համաձայն հրամանի՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներն ուսման վարձի չափը պետք է սահմանեն ոչ ավելի, քան առկա ուսուցման համապատասխան մասնագիտության համար հաստատված ուսման վարձի չափը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., Կոլտնտեսականների փողոց, 4-րդ նրբանցք, 5 հասցեում գտնվող 278,52 ք.մ. բնակելի տուն, 4 ք.մ. մառան, 40 ք.մ. անասնաշենք, 47,52 ք.մ. արտաքին մակերեսով /36,80 ք.մ. ներքին մակերեսով/ ինքնակամ շինություն, 0,0901 հա հողամաս եւ 0,0353 հա ինքնակամ զբաղեցրած հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17330000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Գեղանիստ, 4-րդ փողոց, 6/2 հասցեում գտնվող 90.7 ք.մ. բնակելի տուն, 9.9 ք.մ. միջանցք, 20.4 ք.մ. ավտոտնակ, 9.2 ք.մ. խոհանոց, 6.5 ք.մ. տնտեսական պահեստ, 14.4 ք.մ. թոնրատուն, 8.6 ք.մ. լողարան, 4.9 ք.մ. թռչնանոց, 1.5 ք.մ. զուգարան, 260.1 ք.մ. ջերմոց եւ 0.07137 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 24800000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 12.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 12.10.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՄԵՆԻՑ ԱՄԵՆԱ

ՔՈ ԳՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷՐ

Օգոստոսի 25-ին՝ Հայկոյի ծննդյան օրը՝ Երեւանում, եւ սեպտեմբերի 20-ին ԱՄՆ-ում տեղի կունենան Հայկոյին նվիրված համերգներ: Ռոմանսների արքա Հայկոն իր կարճ կյանքի ընթացքում հսկայական հետք թողեց ոչ միայն հայկական ռոմանսի ձեւավորման, այլ նաեւ հայկական ժամանակակից կինոմատոգրաֆիայում: Նրա ստեղծագործությունները ֆիլմը դարձնում են լիարժեք, հուզում ու ոգեշնչում են:



ArmLur.am-ը հատուկ իր ընթերցողների համար առանձնացրել է, թե հայ հայտնիներից ով ինչպես է շնորհավորել եւ ինչ հիշողություններով է կիսվել:

Հրաչ Քեշիշյան. «Սերը սիրուց հետո... Երբ երգը նոր էր գրվել, ասում էի՝ էս ֆիլմի վերնագիր է... Հիմա մեր համերգի վերնագիրն է: Սերը սիրուց հետո ցավոտ է ու ավելի ուժեղ: Մեզ համբերություն»:

Լիլիթ Կարապետյան. «Հայկո՛ ջան, քո գնալու ժամանակը չէր, համակերպվել անհնար է, շատ մեծ ցավ է բոլորիս համար»:

Քիստինե Պեպելյան. «Այնտեղ՝ վերեւում, բայց հավերժ այստեղ... Ծնունդդ շնորհավոր, Հայկո՛»:

Նանա Տոնոյան. «Կարոտել եմ անսահման բարի տեսակդ, որ ամենաբարդ իրավիճակներում կողքիս էիր ու խաղաղ... Ծնունդդ շնորհավոր, իմ ամենա՛, ի՛մ Հայկո»:

Սոֆի Մխեյան. «Ոչինչ չի մնա... 2007 թ.-ին Հայկոն տանը՝ դաշնամուրի մոտ, ցույց էր տալիս տարբեր մեղեդիներ, հնչեց այս մեղեդին: Միանգամից արձագանքեցի, ասացի, որ հենց սա շատ է դուրս գալիս, ասաց. «Դու խնդիր չունես, ցավդ տանեմ, էս երգը քեզ...»: Մի քանի օր անց Հայկոն զանգեց. «Սո՛ֆս, Քեշիշյանը ֆիլմ է նկարում, ու քիչ ժամանակ է մնացել, #soundtrack -ն եմ գրում, շատ է սազում էն մեղեդին, որ քեզ ցույց տվեցի, կարո՞ղ է դա տամ ֆիլմին, քո համար նոր մի բան մտածեմ...»:

Իրեն երբեք մերժել չէր լինում. առանց բարդացնելու ասացի՝ Հայկո՛ս, խնդիր չէ...

Ֆիլմն իմ ամենասիրելիներից է, իսկ այս մեղեդին՝ ի սկզբանե սրտումս...

Մի օր ոչ մեկս չենք լինի՝ ո՛չ հեղինակները եւ ո՛չ կատարողները, բայց կմնան մեղեդիներն ու կպատմեն Մարդու մասին, նրա հույզերի ու ապրումների, սիրո, երջանկության ու ցավի մասին, նրա ջերմության ու նվիրումի մասին...

Երկնային ծնունդդ շնորհավոր, ընկե՛ր...»:

Կամո Սեյրանյան. «Հայկո՛ ջան, իմ հին ընկեր, ծնունդդ շնորհավո՛ր: Քեզ շատ եմ կարոտել»:

Հիշեցնենք, որ արտիստը կյանքից հեռացել է սեպտեմբերի 29-ին 48 տարեկանում կորոնավիրուսային հիվանդության հետեւանքով:

Հայկոյի հոգեհանգիստը կայացել էր երեկ՝ Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում: Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի աճյունը կամփոփվի Երեւանի քաղաքային պանթեոնում:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՓԱՌԱՏՈՆ

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ Է

«Սիմֆոնիկ Երեւան» միջազգային երաժշտական փառատոնի 12-րդ համերգի ընթացքում հնչել են Էդվարդ Էլգարի, Սեմյուել Բարբերի, Տիգրան Մանսուրյանի, Ալեքսեյ Շորի, Ջոն Բրաննինգի ստեղծագործությունները:

Համերգը ղեկավարում էր դիրիժոր Դանիել Ռայսկինը, որը Ուինիփեգի սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարն է, Սլովակիայի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորը, ինչպես նաեւ Բելգրադի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժորը:

Դանիել Ռայսկինը «Սիմֆոնիկ Երեւան» փառատոնի ընթացքում ղեկավարել է 5 համերգ: Ըստ նրա՝ հնարավոր չէ կապ հաստատել ունկնդրի հետ, եթե կոնտակտ չկա նվագախմբի, երաժիշտների հետ:

Խոսելով Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համագործակցության մասին՝ դիրիժորը նկատել է, որ մարդկային եւ պրոֆեսիոնալ կոնտակտը կոլեկտիվի հետ շատ հեշտ է ստացվել:

«Մշակութային ընդհանրությունները համախմբում են մեզ: Դպրոցը, հատկապես՝ լարայինների, շատ հոգեհարազատ է ինձ, ես ինքս նույն դպրոցն եմ անցել: Ինձ Հայաստանի եւ հայկական երաժշտության հետ երկար տարիներ են կապում, սովորել եմ հայկական ծագում ունեցող նշանավոր ալտահար Քիմ Քաշքաշյանի մոտ, ունեմ բազմաթիվ հայ ընկերներ, ներկայացրել եմ հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործություններ, ձայնագրել եմ Խաչատրյանի կոնցերտներն ու ռապսոդիաները: Այնպես որ, ինձ համար սա մի մշակույթ է, որտեղ ես ինձ շատ հարմար եմ զգում»,- ասում է նա:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի լարային կազմի հետ ելույթ է ունեցել Չինաստանը ներկայացնող կիթառահար Շվովֆեյ Յանը: Վերջինս իր միջազգային հաջողության շնորհիվ ելույթ է ունեցել ավելի քան 50 երկրների հեղինակավոր համերգասրահներում աշխարհի առաջատար նվագախմբերի հետ:

Օգոստոսի 12-25-ը Երեւանում անցկացվել է Symphonic Yerevan միջազգային երաժշտական փառատոնը, որը կազմակերպել են Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը եւ Մշակույթի աջակցման եվրոպական հիմնադրամը (EUFSC, նախագահ՝ Կոնստանտին Իշխանով):

Փառատոնի ռեզիդենտ կոմպոզիտորն է Ալեքսեյ Շորը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Աշնանը արտասահմանում հանգստանալու ամենաէժան տարբերակը Աբխազիան է, իսկ ամենամատչելի ուղղությունները ներառում են Թուրքիան, Հայաստանը, Եգիպտոսը եւ Արաբական Միացյալ Էմիրությունները: Գրեթե բոլոր այս ուղղություններով սեպտեմբեր ամսվա շրջագայությունների արժեքը, օգոստոսի համեմատ, նվազել է «բարձր» սեզոնի ավարտի եւ արձակուրդների ու արձակուրդների շրջանի պատճառով: Միայն դեպի ԱՄԷ էքսկուրսիաների արժեքը փոքր-ինչ ավելացել է ավելի հարմարավետ եղանակային պայմանների սկսվելու պատճառով. պարզաբանել են ընկերությունում: Ըստ Intourist-ի՝ աշնանային ամենամատչելի արտասահմանյան տուրերը վաճառվում են դեպի Աբխազիա, Եգիպտոս, Հայաստան, Իրան եւ Բահրեյն: Դեպի Աբխազիա շաբաթական ուղեւորությունների միջին արժեքը մեկ անձի համար կազմում է 25,1 հազար ռուբլի, Եգիպտոս՝ մոտ 53,7 հազար ռուբլի, Հայաստան՝ մոտ 56,5 հազար ռուբլի, Իրան՝ մոտ 93,2 հազար ռուբլի, Բահրեյն՝ մոտ 100,5 հազար ռուբլի: Տուրօպերատորը հոկտեմբերի 15-ից արձանագրում է դեպի Թուրքիա եւ Աբխազիա տուրերի գների աստիճանական նվազում, մինչդեռ դեպի Եգիպտոս, Արաբական Միացյալ Էմիրություններ, Վենեսուելա եւ Մալդիվներ տուրերի արժեքը սեզոնային գործոնով աճում է:

50 ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան մեկնաբանել է իր ղեկավարած թիմի պորտուգալացի կիսապաշտպան Բերնարդու Սիլվայի հնարավոր տեղափոխությունը Իսպանիայի փոխչեմպիոն «Բարսելոնա»: «Մենք ցանկանում ենք, որ Բերնարդու Սիլվան մնա, բայց ես չեմ ցանկանում, որ թիմում որեւէ մեկը դժգոհ լինի: Երկու ակումբները պետք է փորձեն հասնել համաձայնության: Իհարկե, ես ցանկանում եմ, որ նրա նման ֆուտբոլիստը լինի մեր կազմում, բայց Սիլվան շատ է սիրում «Բարսելոնան»»,- Գվարդիոլան նշեց իր խոսքում: Անցած մրցաշրջանում Սիլվան «Մանչեսթեր Սիթիի» հետ մասնակցել է 50 հանդիպման, խփել 13 գոլ, կատարել 7 գոլային փոխանցում:

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐ

Ըմբշամարտի աշխարհի առաջնության մեկնարկից երկու շաբաթ առաջ միջազգային ֆեդերացիան ներկայացրել է հավաքականների նախնական հայտերը: Աշխարհի առաջնությանը մասնակցող Հայաստանի հավաքականներն ունեն հետեւյալ կազմերը՝ ազատ ոճ՝ Մանվել Խնձրցյան (57 կգ), Արսեն Հարությունյան (61 կգ), Վազգեն Թեւանյան (65 կգ), Արման Անդրեասյան (70 կգ), Հրայր Ալիխանյան (74 կգ), Արման Ավագյան (79 կգ): Հունա-հռոմեական ոճ՝ Ռուդիկ Մկրտչյան (55 կգ), Գեւորգ Ղարիբյան (60 կգ), Հրաչյա Պողոսյան (63 կգ), Սլավիկ Գալստյան (67 կգ), Մալխաս Ամոյան (77 կգ), Կարապետ Չալյան (82 կգ), Արթուր Ալեքսանյան (97 կգ), Դավիթ Օվասափյան (130 կգ):

● *Օգոստոսի 27-ին Բյուրականի արվեստի ակադեմիայում տեղի կունենա «Արմեն Հյուսնունց ջազ քառյակ» համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝ 15.000 դրամ: Սկիզբը՝ ժամը 18:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է տեխնիկական կանոնակարգը:
Մկրտիչ Սաֆարյանը (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեխնիկական կանոնակարգը փաստաթուղթ է, որն ընդունվել է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան կամ ՀՀ օրենքով կամ ՀՀ կառավարության որոշմամբ, որով սահմանվում են արտադրանքի բնութագրերի եւ (կամ) արտադրանքի հետ կապված գործընթացներին, արտադրական եղանակներին՝ներառյալ կիրառվող վարչական դրույթներին ներկայացվող կատարման եւ կիրառման համար պարտադիր պահանջներ, ինչպես նաեւ արտադրանքի ներմուծման եւ շուկայահանման պայմաններ: Այն կարող է ներառել նաեւ արտադրանքի, գործընթացի կամ արտադրական եղանակի նկատմամբ կիրառվող հասկացություններ, պայմանանշաններ, փաթեթավորման, մակնշման եւ պիտակավորման պահանջներ, սանիտարական, բուսասանիտարական, անասնաբուժասանիտարական նորմեր, ինչպես նաեւ արտադրանքի գրանցման մասին պահանջներ:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձանմուշների կանխիկ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից: Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա ստուգման իրականացման ընթացքում ստուգաթերթի համապատասխան հարցը պարզաբանելու նպատակով գնման ենթակա փորձանմուշների քանակի ու պահանջվող գումարի հաշվարկը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ղեկավարին փորձանմուշների գնման համար անհրաժեշտ դրամական միջոցների տրամադրումն ապահովելու նպատակով:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կարելի՞ է երեխային տանել դպրոց, եթե չի լրացել նրա 6 տարեկանը:
Նինա Երեմյան (21 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց 6 տարեկանը լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ավելի փոքր տարիքի երեխաների ընդունելությունը ուսումնական հաստատություն արգելվում է:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի եւ յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ձեւավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին եւ ուղղություններին համապատասխան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Հետաքրքիր լուսանկար է ստացվել մեր երթուղիներից մեկում: Կարծես մեր վարորդները զգուշացնում են, թե ինչքան անապահով են մեր ճանապարհները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: